

1. Փոփոխութիւններ և շտապ օրերը կը հրատարակուին :
2. Տարեկան բաժանորդացիին է միայն չորս արծաթ մի ձիւ կանխիկ վճարելի, թէ մայրաքաղաքիս և իւր արտարձանաց եւ թէ գաւառաց համար :
3. Վեց և երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի :
4. Տեղական և գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :
5. Հատը մէկ դրչ. մէճիտ, և կը գտնուի մասնաւորապէս Պահչէ գաւառու Սուճի Պօղոս աղայի խանութքի :

Փ Ո Ւ Ն Պ

6 Ծանուցման տողը 3 դրչ. է մէկ անգամի համար : Աւելի ատա կըլլայ աւելի անգամներու համար
7. Խմբագրութեան վերաբերեալ որ և է գիր ուղղելի առ Տնօրէն՝ Տէր Հ. Ս. Ալաճաճեան Կ. Պօլիս Պալատ - բաղար Նաֆիյէ խան վերի յարկ թիւ 16 :

ADRESSE

H. S. Adadjian

Directeur du Journal Armenien
FOUNTICHE — 16 Nafie Han. Balouk
Bazar Constantinople.

Թիի 1530

ՉՈՐԵՔՍԵՐԹԻ

1880 ԴԵԿՏԵՄԲԵՐ 3

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ընդհանուր Ժողովներ

Կարծեմք, թէ Արարատեան ընկերութեան հաստատութեան առաջին տարին էր, որ մեք բաղդատեցինք այդ ընկերութեան ընդհանուր ժողովոյ և աղղային ընդհանուր ժողովոյ ըրած ջանքերն ու արդիւնքը դաստիարակութեան համար, և հաստատեցինք, թէ ընկերութիւնը արդեամբք երեւելի կհանդիսանայ և արժանի է ձեռնտուութեան ու քաջալերութեան հասարակաց, իսկ կեդրոնական աղղային ժողովն հանապաղ չոր ու ցամաք խօսքերով կանցնի այս կենսական խնդիրն, մինչդեռ պարտէր դործով օրինակ և գրգռու դրոնուի կրթական ընկերութեանց և այլ ամենայն այսպիսի մարմնոց, ինչպէս կընեն քաղաքակիրթ և յառաջադիմութեան անկեղծ վաճառք ունեցող աղղաց ու ազանց դործունեաց վարչութիւնը :

Աւասիկ տարիներ անցան մեր այս բաղդատութեան վրայ : Թէ՛ աղղային ժողովն և թէ՛ Արարատեան ընկերութիւնը (Գարուցասիրաց և Կիլիկեան ընկերութեանց հետ միացեալ) կշարունակեն : Աղղային ժողովն՝ ուրբաթ, և ընկերութեան ընդհանուր ժողովը կիւրակէ օրը նիստ ըրին : Բաղդատեանք դարձեալ : Առաջինը դարձեալ երեսփոխանաց հրաժարականի խնդրով երկար ժամավաճառութիւն մ'ըրաւ, և դաստիարակութեան խնդիրն ի հարկին կրկն վահան ընող ճարտարներու բացաղանջութիւնները լուսեցան, և անցեալ փակեալ հաշիւներու փոշիներ խառնելու ելան : Հոտած ու փաած ճարտարամտութիւնք, որոց վրայ այսչափին իսկ զղուանօք կգրեմք, և վայ աղղին, եթէ տակաւին այս ընթացքը շարունակէ, և անկեղծութիւն ու ուղղութիւն չը տիրեն : Սակայն Միացեալ ընկերութեան ընդհանուր ժողովոյ կիւրակէ աւուր նիստը բոլորովին հակապատկերն է աղղային ժողովոյ ուրբաթ աւուր նստին :

Ներկայ դանուող ընկեր երեսփոխանք անմիջապէս միահամուռ ոտք ելնելով համակրական եւ ուսնդուն ցոյցերով գրեթէ ի վերայ ձեռաց բարձեալ կտանին կրազմացունեն ատենապետութեան արժուոյն վրայ Նորատուկեան մեծապատիւ Գարբիէլ էֆէնտին, որ կհրաժարէր թախանձաղին և կինդրեն որ դարձեալ ջանայ անձնդիր և անձանձիբ, որպէս ջանացած է երկար ժամանակ և Արարատեան ընկերութեան ոգին ու շունչն եղած : Յետ այսօրիկ, կանցնին կզրկեն ընկերութեան ելեւմտացոյցին կարեւոր խնդիրն. լրջաբար կխօսին կխորհրդակցին՝ Հայաստանի և հայաբնակ նահանգաց մէջ հաստատեալ բաղմաթիւ վարժարանաց միճակին վրայ. կխորհրդակցին թէ ինչպէս կարելի է այդ վարժարանները կանդուն պահել, արդիւնաւորել, և ինչ միջոցներով կարելի է տեղի չտալ չափազանցութեանց՝ որոնք որչափ ալ բարի և գեղեցիկ նպատակաւ լինին, իւրեանց վնասները կունենան : Եւ վերջապէս իմաստուն յառաջատեսութեամբ կորոշեն աստիճան առ աստիճան ընթանալ շարունակ և անընդհատ ընթանալու համար : Հաճութեամբ լսեցինք այս որոշումն : Արդարեւ հաստատուն կընթանայ, ո՛վ որ չափաւոր կրեւնաւորի, և հարկաւ ընկղման վրտանդէ ազատ չմնար նաւ մը երբ անչափ բեռնաւորեալ է : Անշուշտ այս սկզբամբ խնամ պիտի տարուի ընկերութեան ծախուց չափաւորութեան : Լսած ըլլալով թէ առաջիկայ տարուց համար 5000 լիւրայէն աւելի եք նշանակեալ է՝ երթադրական մտից վրայ հիմնեալ, - վտանգի երկիւղներ մտած էին ի մեզ ընկերութեան գոյութեան նկատմամբ : Սակայն ահա փարատեցան այդ երկիւղներն, և լի՛ յուսով այս անգամ ալ երկու ընդհանուր ժողովոց բաղդատութիւնն ընելէն, և Միացեալ ընկերութեան ընդհանուր ժողովն ու նորընտիր ատենապետ էֆէնտին շնորհաւորելէն յետոյ, խըն.

դութեամբ և խայտանօք հրաւեր կկարդամք ճշմարիտ յառաջադիմասէր ամենայն հայոց, հեռաւորաց և մերձաւորաց, յարածամ օգնել սոյն ընկերութեան, քաջալեր կարդալ, և պահել իբրեւ զբիւր ական :

Սերաստիոյ խնդիրը դեռ բանակցութեան նիւթ եղած է : Յիշեալ քաղաքէն եկած վերջին դրերէ կիմացուի, թէ ո՛չ միայն արդէն բանտարկեալք չեն արձակուած, այլ և ուրիշներն ալ հետզհետէ կբանտարկուին՝ հալառակ հրամանի դատական գործոց նախարար վսեմ. ճէվտէթ փաշայի, որ հեռադրած էր արձակել բանտարկեալները՝ երաշխաւոր առնելով : Կլեմք, թէ մասնաւորապէս այս հրամանը կրկնուեր է Գաղաքական ժողովոյ ատենապետ Ալիանոսեան Յակոբ էֆի. համար, բայց դարձեալ չէ դործադրուեր : Զարմանօք կգրեն, թէ ծանուցեալ դէպքէն քիչ մ'ետքը կուսակալն կանչելով Յակոբ էֆէնտին, շնորհակալութիւն յայտներ է՝ խառնութիւնը հանդարտեցունել ջանալուն համար. սակայն օր մ'ետքը բանտարկել տուեր է զանի ալ, պատճառելով թէ քանի մը մահմետականք կվկայեն որ թուրքերէն լեզուաւ ժողովուրդը հանդարտութեան հրաւիրեր, սակայն հայերէն լեզուաւ գրգռեր է : Քննութիւնք՝ որ անտարակոյս պիտի բացուի, կընայ ամենայն ճշմարտութիւն երեւան հանել : Ո՛չ միայն բանտարկեալք այլ և գեր. Առաջնորդն քննութիւն կը պահանջէ. և Պատրիարքարանն ալ մինչեւ ցարդ քանիցս խընդրելէն զատ առջի օր ալ Պատրիարքական գեր. փոխանորդը դրնաց առ ճէվտէթ փաշա՝ քննութիւն և բանտարկելոց արձակումն խնդրելու համար :

— Կիւրակէ օրը Ս. Պատրիարքն ու վարչական խորհուրդը տեսակցեցան Սոյ Ս. Կաթողիկոսին հետ Աղաթիոյ խորհրդարանին մէջ : Թաղական խորհուրդը նոյն օրը ճաշ տուաւ այս ամենուն : Սոյ Ս. Կաթողիկոսը խոստացեր

է գրով վարչական խորհրդոյն տալ իւր խնդիրներն ու առաջարկութիւնները, որոց կարդատութեան համար անձամբ Պօլիս դալու հարկ տեսեր է : Սյս մասին մեր ունեցած դիտողութիւններն ու իղձերն նախորդութեթով բաւական երկարօրէն նշանակեցինք : Կմաղթեմք որ աղղային շահուց համաձայն առաջարկութիւններ լինին, և արդարութեամբ ու անկեղծութեամբ կարգադրուին :

— Դատական խորհրդական էֆէնտին շրջաբերականաւ մը հրահանգ տուեր է մայրաքաղաքիս թաղական խորհրդոց, որ ըստ տրամադրութեան նոր օրինաց վարչական կազմակերպութեան՝ հաշտարար Դատարան կազմեն Թաղական խորհրդոյ կողմէ ընտրեալ երկու անձերէ և թաղին քահանայական դասէն ընտրեալ մի քահանայէ, ու զընելով որ անգամոց դոնէ մին քաղաքական ու ուսումնական խընդրոց ըստ բաւականին հմուտ, և դանոնք պարզելու և լուծելու համար մինչեւ ցարդ ի կիր առնուած կանոնաց տեղեակ լինի. և Դատարանն ունենայ մի քարտուղար թոշակաւոր կամ անթոշակ ըստ դրամական կարողութեան և գործոց կարեւորութեան իւրաքանչիւր թաղին. և եթէ հարցաքննութեանց արդիւնքն եղրակացունելու և որոշումներն ճըշդիւ խմբադրելու կարող քարտուղար մը ո՛րեւէ պատճառաւ չկարենայ առնուիլ՝ սոյն պաշտօնին գործադրութեան հոգը պէտք է անգամոց մին ստանձնէ : Դատական խորհրդական էֆէնտին Թաղական խորհուրդներէն ուղած է նաեւ առ ձեռն և անորոշ մնացած դատական խընդրոց ցուցակն՝ առ ի դիւրութիւն զրկելով ցուցակի մը նախադիճն. բաց յայտցանէ, յանձնարարած է որ Թաղական խորհուրդը մինչեւ ցարդ իւրեանց քննած ու լուծած դատեցուն համար ինչ օրէնքով կամ սովորութեամբ վարուին տեղեկադրէն և ատենադրութեանց օրինակներն իրեն զրկեն, մինչեւ 15 օր, ի դիւրու-

Թիւն խմբագրութեան դատական կանոնադրոյն և ի հաստատութիւն դատական կանոնաւոր վարչութեան մը՝ որով կարելի լինի արդարութեան գործադրութիւնն ապահովել Ազգին մէջ: Գատական կանոնաւոր վարչութեան մը պէտքն ի բազմաց հետէ ըզգայի եղած է. արդարութեան գործադրութեան ապահովութիւնն անհրաժեշտ է. ուստի Թաղական խորհուրդը պարտին փութով կատարել դատական խորհրդական էֆէնտիին յանձնարարութիւններն ու հրահանգներն:

— Ազգային կրթական խորհրդարանը, վարչական խորհրդոյ որոշմամբ Ղալաթիոյ ազգային մատենադարանը փոխադրուած ըլլալով դաստիարակութեան վերաբերեալ խնդիր ունեցող արդոյ ազգայինը կհրաւիրուին դիմել յիշեալ մատենադարանը:

— Միացեալ ընկերութեան տնօրէն ժողովոյ կողմանէ:

« Հայոց Միացեալ ընկերութեանց տնօրէն ժողովը նուիրական պարտաւորութիւն մը կը համարի իրեն իւր ջերմ շնորհակալիքը յայտնել այն ազգասէր Հայոց և հայասէր օտարաց որք իրենց դրամական, գրական և այլ նուէրներով փութացին օժանդակել ընկերութեանս առաջին ձեռնարկներու և որոց անուանքը և նուիրատուութեանց ցանկը կը յանձնեմք պատուական լըրագրոյդ ի հրատարակութիւնն:

« Տնօրէն ժողովս իւրոյս է որ սոյն օրինակ արդիւնաւոր ձեռնարկութեանց յիշատակութիւնն հետզհետէ ընելու բարեպատեհ առիթն չպակսի իրեն մանաւանդ այնպիսի ժամանակի մէջ երբ դաստիարակութեան բարիքը և ստիպողականութիւնը ամէն հայ լաւ ըմբռնած կը թուի, և Միացեալ ընկերութեան ձեռքը գտնուած գրամագլխնոյն անբաւական լինելն ալ ակնհերեւ ճշմարտութիւն մ'եղած է ամենուն համար:

« Այլակերտի ազգայիններէն մեծապատիւ Սուքիաս տղոտ Նալպանտեան 40 - 50 օսմ. ոսկւոյ արժողութեամբ հոգմը նուիրեց, որոյ վրայ կառուցուած է Արշակերտի վարժարանը:

« Մշոյ ազգայիններէն մեծապատիւ Աստուածատուր աղա Ծահինեան նոյնպէս 40 - 50 ոսկւոյ արժողութեամբ գետին մը:

« Բազէշէն 38 ազգայինք ամսական կանոնաւոր 48 բաժին ստորագրած են որոց տարեկանը 1776 դահ. արծ. գանձուած է արդէն ձեռամբ Միացեալ Ընկ.

Տուրուբերանի տեսուչ Սարբեան Մկրտիչ էֆի. յիշեալ պատուարժան բաժանորդաց անուանքն մի առ մի պիտի երեւին ընկերութեանս տարեկան տեղեկագրին մէջ:

« Բօթիկի ազգայիններէն մեծապատիւ Պ. Կարապետ Պօպօֆ 1000 ըուպլիի դումար մը նուիրեց ձեռամբ Մշակի պատ. խմբագիր Պ. Գ. Արծրունիի:

« Գ. Պօլէն պարոն Ազեկասնդր Բրօթօբօֆ տարեկան 10 օսմ. ոսկի, ձեռամբ Տիգրան էֆ. Հիւնքեարայէ յէստեանի:

« Գեր. Վահան վարդապետ պարտիզակցի 5 օր. Յիսնակ առակը հայկականք Ա. հատոր. 5 օր. Յիսնակ առակը հայկականք Բ. հատոր. 5 օր. Խօսք զհայրենեաց

« Մեծ. Համբարձում էֆ. Աճէմեան Լոյս հանդէսի տարեկան բաժանորդագր. մի օրինակի. մեծ. Յովհաննէս էֆ. Արշակունի Աշխարհագրական ցուցակը 4 օրինակ. մեծ. Յարութիւն էֆ. Չարքրեան Փարոս Հայաստանի Ա. տետր. 1880 օր. 3 Իմ ճանապարհորդական յիշատակարանից Գ. Խատիսեան -3. Կրքեր (Ս. Բաբայեան) օր. 2. Ուսումնարանի առողջապահութեան հարցեր օր. 2 Վարակիչ հիւանդութիւններ օր. 1 Ժիլ Պլաս գաղղ. օր. 1 Եղիբ Իմ (Ճիկը պարոնի) օր. 16 մեծ. Գարեգին էֆ. Պարտատեան Բընական պատմութիւն (Գ. Մալաթեան) օր. 1 աշխարհագր. պատկերազարդ. (Փալարաշեան) օր. 1 հաղար և մի առակաւոր բանք (Գ. արք. Ա. յիւզեան) օր. 1

« Տնօրէն ժողովս ինչպէս վերոյիշեալ նուիրատուաց նոյնքան եւս շնորհապարտ է այն ազնիւ տիկնայց և տեարց, որք ամէն կարելի եղած միջոցներով կը փութան նպաստամտոյց գտնուել ընկերութեանս տարեկան կամ ամսական բաժանորդագրութեան ինչպէս նաև հանդանակութեանց և կամ թաղային մասնաճիւղերու կազմութեանց ձեռնարկելով:

Արեւադէր Արեւապետ
Չարեհ Նիշանեան Յովհաննէս Թորոտեան

ԱՅՆ ԵՒ ԱՅԼՔ

Շատ կողմերէ լուր կը տրուի, թէ Պիղմարդ իշխանը Գաղղիոյ դիմելով առաջարկեր է՝ որ երկուքը մէկտեղ աշխատին արեւելեան խնդրոց դժուարութիւններն բառնալու և բարւոք կարգադրութիւն մ'ընելու համար: Պիղմարդ իշխանը մէկ շարթուան մէջ 3 - 4 անգամ տեսակցեր է Պէրլինի դաղղիական դեսպանին հետ: Այս տեսակցութիւններէն

բարւոք և սահմանափակ արդիւնք մը կ'յուսուցուի:

— Մայրաքաղաքիս ամերիկեան նորեկ դեսպանն, երէկ իւր պարագայիւք պալատն երթալով կայսերական կառօք՝ պաշտօնագրերը մատոյց օգոստ. Սուլթանին:

— Վերջին պատերազմին ժամանակ ընդհանուր հրամանատար Նիքօլա մեծ դըսին տիկինն երէկ Չարին յատուկ շոգենաւով մայրաքաղաքս դալով, ուսական դեսպանական պաշտօնակալներն ընդունելէն և երկու ժամու չափ կենալէ յետոյ՝ ուղեւորեցաւ Օտէսա: Իտալիայէն կ'գառնայ:

— Ղալաթիոյ սպասաւորներէն Պ. Թիանօ ելեւմտից նախարարին առաջարկեր է 2 միլիոն լիրա փոխ տալ, 100ին 10 տուկոսով և կէսը դրամ ու կէսը յանձնագրերով (հէլալէնամէ) ամբողջացունելու պայմանաւ. սակայն չէ ընդունուեր:

— Պուլզարիայէն 35 իսլամ ընտանիք ալ մայրաքաղաքս եկեր են շարթու օրը:

— Հոչակաւոր աղա Այվազովքի Ամերիկայի դիւտը ներկայացունող հրաշալի պատկերին համար՝ 100 հաղար ֆրանդ տալ առաջարկեր է մէկը:

— Ռուսիոյ մէջ արմտեաց դիւներն առաւել բարձրացեր են. և ապագային համար առաւել երկիւղ կայ:

— Արեւելեան - Ռումելիի կուսակալին և նորա տիկնոջ կողմանէ շքեղ պարահանդէս մը տրուեր, և ինչպէս տիկնոջ նոյն պէս բոլոր պաշտօնակալաց ու երեւելեաց տիկնայք՝ աղամանդներով դարդարեալ՝ ներկայ գըտնուեր են:

— Այս առաւօտ տաճիկ լրացրաց միջոցաւ ի պաշտօնէ ծանուցուած է, թէ պատժական օրինաց 234 դ. յօդուածոյն համաձայն մէկէն մինչև վեց ամիս բանտարկութեան և մէկէն մինչև յիսուն լիրա տուգանաց պիտի դատաւարտուին վիճակահանութեան տոմսակ ծախողները, և վիճակահանութեան դըրուած նիւթերն դիտի դրաւուն յարբուռուստ:

— Հռոմէն հեռագրեալ է երկուշարթի գեր. Հասունի կարգիւնալութեան աստիճանի բարձրացած լինելն:

— Գաղղիոյ կառավարութիւնն արգիլեր է շոգենաւոց՝ Մարսիլիոյ մէջ հելլենաց սեղանաւորաց դրած կամաւորներն Յուսաստան փոխադրել: Այս ար-

գելքը՝ Գերմանիոյ ու Աւստրիոյ դոհութեան, իսկ Ռուսիոյ և Անգղիոյ կառավարութեանց դժգոհութեան պատճառ եղեր է:

— Ռուսական Մոսկուա անուն լրագիրն հարցուցեր է, թէ արդեօք մէկը մնայ, որ ուրանայ Պէրլինի դաշնագրոյն չէթէ լազալութեան այլ ընդհակառակն դժտութեան ու յուզմանց աւելնալուն պատճառ լինելն:

— Կալացի մէջ հասարակաց ժողով մը գումարուեր է ի նըպաստ ազատ նաւարկութեան Գանուերի:

— Գաղղիոյ հանրապետութեան վախճանեալ նախագահ Պ. Թիէրի ամուսինն մեռեր է այս օրերս: Անդաւակ լինելուն պատճառաւ, Թիէրի ազգատոհմին անունը շնորհաւ կհամարուի:

— Տէյլի-Նիւզ լրագիրն՝ Բեդրեսպուրիկի թղթակցէն առնելով ծանուցած է, թէ Նախիջևանի կողմը համախմբեալ ուս շօրքը 5000 էն աւելի է՝ հակառակ նախորդ հրատարակութեանց:

— Աղեկասնդրիայէն կ'գրեն, թէ Եգիպտոսի խալիվ Թէվիթիֆ փաշա առաջիկայ ամսոյ մէջ Սուէիշի ջրանցքը պարտելու պիտի ելնէ Պ. Լէսէփօի հետ:

— Հասարակային շինուածոց վերաբերեալ խնդրոց համար կայսերական հրամանաւ յանձնաժողովն ըսկըսած է նիստ ընել ընդ նախագահութեամբ Նամըզ փաշայի: Վարթ այս առաւօտ կ'մանուցանէ, թէ յանձնաժողովոյ քըննութեան ենթարկուեր են հասարակային շինութեանց վերաբերեալ բազմաթիւ ծրագրեր ու խնդրագրեր, սակայն շատը այլ և այլ տեղերու նիւթական ու բարոյական շահերը գրաւելու նպատակ ունեցող, և մէկ մասն յապագային փոխարինութեան պահանջման դատարու բաց դուռ ձգող երեւցեր են:

— Ղալաթիոյ Գօմիսէր ընտրուեր է՝ Այտընի դանձային նախորդ ընկի Մթալրարի էֆէնտի:

— Վախճանեալ Փաղը Մուսթաֆա փաշայի դուստը Նալը Հանրմ մէկ երկու օրէն Եգիպտոս պիտի ուղեւորի, իսկ եղբայրը Մէհմետ Այի փաշա Պօլիս եկեր է:

— Առջի օրը Պաթում անուն շոգենաւով 150ի չափ նոր զօրք Պօլիս եկաւ Տրապիզոնէն:

— Երէկ Բ. Գուռն նախարարաց արտաքոյ կարգի ժողով դումարեցաւ:

— Առաջին աստիճանի օսման նկէ պատուանշան տրուեցաւ:

Գարուտան փառայի և գաղղիա- կան դեսպան Պ. Թխոյի :

— Խոտախոյ կառավարութեան կողմանէ Գուրոն տիժալի պատ- ուանչան ընծայուեր է՝ առեւտրա- կան առաջին ժողովոյ նախագահ Շահպազ էֆէնտիի երկրորդ, յիշ- եալ ժողովոյ անդամներէն Ռի- ֆաթ պէյի՝ երրորդ, և գործա- դիր վարչութեան օգնական Վա- սրֆ էֆէնտիի՝ չորրորդ աստի- ճանի :

— Անցեալները դաւանները զրկուած գանձային ըննիչը ետ կանչուած լինելով՝ սկսած են հետզհետէ գալ : Այս քննութեան գործին համար նոր եղանակ մը պիտի որոշուի եղեր :

— Գարատաղի դեսպանը՝ որ մայրաքաղաքէս մեկնած էր, մօ- տերս պիտի դառնայ, և Գարա- տաղի հետ Բ. Գրան քաղաքա- կան յարաբերութիւնը վերստին պիտի սկսին եղեր :

— Կրտսի թէ, եւրոպական պատուիրակը որոշեր են Թուր- քիոյ թողուլ Ս. Ժօրժ գիւղն, զոր Գարատաղ կը պահանջէր և նոր գծաութեան մը պատճառ ե- ղած էր :

— Պուլղարիոյ նախարարը փոխ- ուեցան, երկաթուղեաց վերա- բերեալ խնդրոյն կարգադրու- թեան յապաղման պատճառաւ, որոյ վրայ Աւստրիոյ կառավա- րութիւնը վերջնական կերպիւ պահանջեր է որ շուտով պատ- ուիրակ մը զրկուի Վիեննա :

— Անդղիական Կոսյ լրագիրն գրեր է, թէ Ռուսիոյ կառավա- րութիւնը Շէյխ Ապիտուլլահի մէկ քանի մարդիկը բռնել և Ե- րուսանի մէջ զինուորական ատ- եանի մը յանձնել է, որոնք Կով- կասիոյ կողմը բնակեալ քուր- դերը ապստամբեցունելու զրկը- ուած են եղեր, և թէ՛ զօրապետ Եուվանօֆ զինուորական վարչու- թիւն հրատարակեր է սահմա- նազրկին վրայ :

— Առջի օր ալ մաս մը թըղ- թագրամ հրոյ ճարակ տրուեցաւ Պայաղիտի հրապարակին վրայ :

— Ծովային պաշտօնատունը Խաթամուլ լրագիրն դէմ գատ պիտի բանայ եղեր՝ Մախսուսէի շոգենաւուց դէմ ծանր յօդուած մը գրած լինելուն պատճառաւ, որոյ հեղինակ կկարծուի յիշեալ պաշտօնատան վերաբերեալ անձ մը :

— Պ. Գօսթանթին Զաբա՝ որ Պէյօղլուի Զարին անուն յունա- կան վարժարանն հիմնած է և ամեն պիտոյքը կհոգայ, 350 հա- զար ֆրանկ նուիրեր է ի նպաստ ներկայ պիտոյից ֆունաստանի, և Մարսիլիոյ մէջ գանուող տըր- թոր Պ. Մաթաբաս՝ 10000 ֆը-

րանգ ի նպաստ կարմիր խաչի ընկերութեան :

— Գերմանիայէն Բ. Գրան հը- րաւիրած պաշտօնակալաց եր- կուքն մայրաքաղաքս դալու վը- րայ են : Մէկը՝ արտաքին գոր- ծոց, իսկ միւսը անուղղակի աը- ըոց վարչութեան խորհրդական պիտի ըլլան եղեր :

— Խաթամուլ լրագիրն ըս- տուգեր է, թէ անհիմն են Ե- ղիպտոսի և Հապէշաստանի մէջ վերստին թշնամութեանց սկըս- ուելու վրայ ըլլալուն զրոյցներն :

— Ճէրիտէի-Հավատիս երէկ մասնաւոր հեռագրէ մը առնելով գրած էր, թէ Շէյխ Սատրգ դարձեալ Ուրմիա մօտեցեր, և պարսիկ հրամանատարն խոյս տուեր է : Ուրիշ հեռագիր մի ալ ծանուցած է եղեր, թէ Շէյխ Ապիտուլլահ Ուրմիոյ կողմը պար- սից վրայ յարձակելով՝ յիրուցան ըրեր, շատ մարդ ջարդեր, ե- րեք թնդանօթ աւերէ, և քուրդք ընեները քաշուած՝ Ուրմիոյ վրայ յարձակիլ կպաւնան : Յիշեալ լրագիրն Գիւրտստանէն եկած նամակ մ'ալ յիշելով՝ կը ծանու- ցանէ թէ քրդաց ձիււորաց թիւն 25000ը անցած է :

— Երէկ առաւօտ Պոլիս Պա- լրդպաղար Նաֆիէ խան երկ- րորդ յարկ Ունճեան մեծ. Արիկ էֆէնտիի սենեակին մէջ գասան կոտրած, և մէջը եղած արծաթ՝ ոսկի՝ արծէթուղթ և սէրկիներ գողցուած տեսնուեցաւ : Խանին ներքեւը փողոցին վրայ նայող խանութի մը մէջ սեղանաւորու- թիւն ընող հրէայն իսկոյն ձեր- բակալեցաւ . սա նոյն կարգը երկրորդ խանութն ալ վարձած, և օր մը յառաջ ուրիշի մը վար- ձու տուած ըլլալով, նոյն խա- նութէն ծակ բացեր և յաջողեր են եղել մինչև Արիկ էֆէնտիի սենեակը : Խանին սենեակալեան ու դիմացի մասվաճառն խանու- թէն ձայն առնելով և երթեւե- կութիւն մը տեսնելով՝ պատճառն հարցուցեր, և անտարբեր մնա- ցեր են՝ պատասխան ընդունելով թէ խանութը նոր վարձած են, և գիշերայն պատրաստութիւն կտեսնեն հետեւեալ առաւօտ բա- նալու համար : Խուղարկութիւնը սկսած են, սակայն մինչև ցարդ դողերն գտնուած չեն :

— Թէրճէմանը-Հազիղաթ լը- րագիրն երէկ հետեւեալն գրած էր քրդական ապստամբութեան վրայ : — «Քրդաստանի կողմէն եկած լուրերն դեռ ցաւալի են : Ստայդ է, որ Շէյխ Ապիտուլլահ էֆէնտի քաշուեր է՝ Պօլսէն գա- ցած խրատուց անսարով, բայց հաստատապէս կկարծուի թէ մեր կողմի քրդաց գլխաւորաց ոմանք

գեւ ապստամբաց (էրպազը դը- յամ) հետ են, և կտեսնուի որ Պարսկաստանի քրդաց մէջ ապրս- տամբութեան դաշտախարն (ֆիդ- րի դըյամ) հետզհետէ ընդհան- բանալու վրայ է : Եթէ աշխար- հացուցին վրայ ակնարկ մը նետ- ուի՝ Սինէի նահանգէն դէպ մին- չև Գալիթժ բոլորովին ապստամ- բութեան շրջանակին մէջ են : Կը կարծուի, թէ այս վայրաց քուրդ բնակիչը 1 | 2 միլիոնէն աւելի են : Սոյն ժողովրդեան պատերազմիկ լինելուն դալով բաւական են պատմական վկա- յութիւնք : Այս անգամու ա- պրստամբութիւնը երբեմն տեղի ունեցած կենդանագողութեան նման բան մը չըլլալով՝ Պարսից կառավարութիւնն եթէ անմիջա- կան դարման մը չդտնէ, ար- դարեւ կվախցուի հետեւանաց ծանրութենէն : Հետեւաբար, այս ապստամբութեան ջնջման հա- մար մինչև ցարդ մեր ցուցած փափաքը կշարունակեմք, և թե- րեւս դէպքերուն կարեւորութեան աւելնալուն չափով մեք ալ մեր փափաքը կաւելցունենք : »

— Պուլղարիոյ մահմետականաց զինուորութիւն չնդունելով գաղ- թել ուղեւնուն դէմ գրած է դար- ձեալ Թէրճէմանը - Հազիղաթ՝ հետեւեալ խորհրդածութեամբ :

«Արդարեւ բոլոր աշխարհ հա- ւատաց : թէ մահմետականաց պուլղարներէն կրած հարստա- հարութիւնը խիստ ծանր են, բայց զինուորութիւնը՝ զրկանք կրող աղք մը զրկանքէ ազատե- լու միջոցներուն գլխաւորներէն է . մեք կմտածեմք թէ՛ Հուն- դարիոյ, Սերպիոյ և Մօլտո-Վա- լարիոյ մահմետականք եթէ գաղ- թած չլինէին, այժմ այն վայ- րերն միայն հպատակութիւնը փոխող իսլամական երկիրներ կը մնային . իսլամաց գաղթելուն պատճառաւ՝ իսլամ երկիրներ լի- նելու կերպարանքէն բոլորովին երած են . ահա Պուլղարիոյ մէջ 6-700 հազար մահմետականք կը գտնուին տակաւին . ցորչափ սո- քա մնան անդ, Պուլղարիոյ ալ իսլամական երկիր մ' ըլլալուն կերպարանքը կմնայ . իսկ եթէ եղնեն՝ այն կողմանք եւս ուրիշ երկրաց կնամանին . արդ որովհե- տեւ պուլղարք իրենց շահուց համաձայն կը գտնեն իսլամաց գաղթելն, ուստի յայտնի է թէ չպիտի ընդունին Սօֆիա գացող մահմետական երեսփոխանաց խնդիրն, որ է զինուորութենէ ազատ լինիլ, ապա թէ ոչ գաղ- թել : »

— Յունաստանի գլխաւոր նա- խարարն Սթանապուրի թղթա-

կցին հետ տեսնուած ատենը ը- սեր է, թէ կարելի չէ որ Յու- նաստան վերստին բանակցու- թեան մասնէ Բ. Գրան հետ : Միւս կողմանէ կրտսի, թէ Յունաս- տանի կառավարութիւնը առա- ջարկեր է մեծ տէրութեանց՝ հելլենական սահմանաց խնդրոյն վերջնական կարգադրութեան համար վճռատու ատեան մը ո- ըրշէլ, ինչպէս եղաւ Ալապամայի խնդրոյն համար :

— Պուլղարիոյ իշխանն ըսեր է եղեր, թէ սխալ է այն կարծիքը թէ Յունաստան եթէ պատե- րազմի եղնէ և կորսնցունէ, մի- այն պատերազմը պիտի կորսն- ցունէ և ո՛չ այլ ինչ :

— Թէհրանէն դեկտ. 6 թուով երած հեռագրի մը նայելով՝ քա- նի մը հաղար պարսիկ ուխտա- ւորք Գիրմանշահի արեւմտեան կողմը ապահովութիւն չլինելուն պատճառաւ Պաղտատի մէջ կե- նալ հարկադրուեր են, թէ՛ ուխ- տաւորաց երեք կարավանք Գաս- րը-Շիրին ըսուած տեղը քրդե- ընէ կոխուեր, և 500ի չափ մար- դիկ սպանուեր ու վիրաւորուեր են, և թէ՛ Պարսիկ պաշտօնա- կալք հապարակաւ և իրա պար- դեւ խոստացեր են քրդի գլուխ մը բերողին :

— Աժանս - Ռուս սոււա կհանէ՝ Գաթարոյէն մեկնող ուսական նաւատորմին Պիրէոն մնալու զը- ըոյցը :

— Ներկայ տարւոյս ինն ամ- սոց մէջ Գերմանիայէն 80 հազար հոգի հեռաւոր երկիրներ և մաս- նաւորապէս Ամերիկա գաղթեր են : Այս առթիւ հաշիւ եղած է, թէ 1871էն հետէ այսինքն ինը տարուան մէջ Գերմանիայէն հե- ուաւոր երկիրներ գաղթող գեր- մանացուց թիւն մէկ միլիոնն ան- ցած է : Այս գաղթականութեան պատճառ կհամարուի՝ զինուո- րական ծառայութեան և տրոց ծանրութիւնը, որ զինուորական ծախուց տարապայման չափա- զանցութենէն յառաջ կուգայ :

— Գաղղիոյ հանրապետութեան նախագահ Պ. Կրէվի ի պաշտօնէ ընդունել է Մէքսիկայի դես- պանը, և հետեւաբար քաղաքա- կան յարաբերութիւնը սկսեր են Մէքսիկայի հետ :

— Գարատաղի իշխանին կող- մանէ պատուանշաններ բաշխը- ուեր են՝ միացեալ նաւատորմին հրամանատարաց :

— Վիեննայէն լուր երած է, թէ Յունաստան կընդունի դարձեալ բանակցիլ Բ. Գրան հետ, բայց պայմանաւ որ Եւրոպիոյ մեծ տէրութիւնք իբ- րեւ դատաւոր կանգնին, և այս

անգամ արուելիք վճիռն թէ՛ Բ. Գուռը և թէ՛ Յունաստան ընդունելու և դործագրելու պարտաւոր լինին :

Հրաւեր

Առ Բրդեցի Աղգայինս որ ի Կ. Պօլիս Ազնիւ եղբարք

Յառաջիկայ կիրակի օր, որ է դեկտեմբեր 7, ընկերութեանս ընդհանուր ժողովն նիստ ունի Ղալաթիոյ Աղգ. կեդրոնական վարժարանին մէջ, ժամը 7 ին :

Կը խնդրուի որ բոլոր Բրդեցի եղբարք բարեհաճին գալ և կատարել իրենց ազգասիրական պարտաւորութիւնը :

Ի դիմաց ընդհ. ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ
Յովհաննէ՝ Սրապետ Թ. Ուրեղեան

Թշրինի-սանինին 20ինճի փէնչ շէնպիհ կիւնի ազգամը սաաթ 12 յէ 10 տագիդէ դալարագ քէօր ըրևաէն Անատոլու ճիհէթինէ հարէքէթ իտէն 19 նօմբօլու վարօրըն պաչ գամարասընտա պիր գըրմըզը մէնտիլէ սարըլը հարպլիյէ տայրէսինէ այիտ էվրագը ընսիլյէի քիմ պուլմըչ իտէ՝ մէղքիւր վարօրըն գամարօթընա վէ եախօտ շիրքէթի խայրիյէնին մէմուրէրինէ թէպիմ իլլէտիյի հալտէ քէնտիսի մէմուռն իտիլէճէքտիր :

29 Թշրինի-սանի

Էլիթի Կեդրոնական
Կէնտի Կեդրոնական

Պէյօղլունտա Գուլէ-Գափուսը ճատտէսինտէ Ծահ-գուլու ճամիի շէրիֆ իթթիսայինտէ քեալին էվգաֆը հիւմայուն խաղի-նէսինին մալի օլան քիթապը տիւքեանը տօղսան սէքիլ սէնէսի մուհարէմինտէն իթիպարէն քիւրայէ վիրիլէճէ յիտէն խթիճար իթմէյէ թալիպ պուլունանլէր թարիսի իլանտէն նիհայէթ օն կիւնէ գատար էվգաֆը հիւմայուն վարիտաթը ումուսիյէ իտարէսինէ կէլմէլէրի իսթար օունուր :

12 մուհարէմ 98

Էլիթի Կեդրոնական
Կէնտի Կեդրոնական

Ճէննէթմէքեան պէղմը ալէմ վալիտէ Սուլթան հաղթէթլէրի էվգաֆ ճէլլէսի իլէ միւհադաթընտան Գարա-Օսման զատէ Հիւսէյին աղա, վէ սայիր էվգաֆը մաղպուլէտէն իտրէմիտ վէ Բէմէր-Էտրէմիտ գաղալէրի իլէ իմրուտապատ նահիլէսինտէ պուլունան զէյթուն պաղչէլէրի իլէ մէնկէնէլէրին տօղսան ալթը սէնէի մալիյէսի հասըլաթը պիլ

միւզայիտէ իհալէ օլունաճաղըն տան, վէ պուլըն իչուն խաղի-նէտէն մէմուրը մախսուս իղամ գըլընտըղընտան՝ մէղքիւր զէյթունը վէ մէնկէնէլէրին իլթիւզամընա թալիպ օլանլէր թարիսի իլանտէն նիհայէթ օն կիւնէ գատար միւթէպէր քէֆիլլէրի իլէ վէ եախօտ մուսատտագ քէֆալէթնամէլէրինի միւսթահալէպէն պէրապէր մահալինտէ միւզայէտէ մէվլինէլէրինտէ պուլունմալէրի իսթար վէ իլան օլունուր :

9 մուհարէմ

Կ. ՀԱԶԱՐԵԱՆ

Գործարան Ծխախոտի

Ծխախոտի հանրածանօթ վաճառականներէն Հաղարեան Կարապետ էֆէնտի որ երկար ժամանակէ հետէ Եւրոպիոյ հետ ծխախոտի վաճառականութեան յարաբերութիւն ունենալով մեծ հմտութիւն ու փորձառութիւն ստացած է, իւր տրամադրութեան ներքեւ առած է այս անգամ երբեմն «Գանտիլի» անուանեալ գործարանը : Արդէն յայտնի է, թէ Հաղարեան էֆէնտի յատուկ գործակալներ ունի Ենիճէ, Տրամա, Գափալա, Սամսուն, Պաֆրա և Տրապիզոն. հետեւաբար ընտրութեան ու աժանութեան համար մեծ դիւրութիւններ կընծայէ. ուստի յիշեալ գործարանը դիմող ամեն կարգի յաճախորդք անտարակոյս դո՛հ պիտի լինին : Յատուկ յանձնարարութիւնք ալ ճշդիւ կկատարուին ամեն ճաշակի յաճախորդաց համար : Եւրոպա զըրկուելիք ծխախոտք ազատ են Պանտրօլի տուրքէ :

Գործարանն է Պօլիս Մըսըրչարըլը անկիւնը Բէլթէնճիլէրպաչը, Եափրաքճի խան թիւ 106 :

ՊՏՈՅՏ ՄԸ

Պարոնեան էֆէնտիի գրած ու հրատարակած զուարճախառն տետրերուն բովանդակութիւնն է, որ բոլոր հայ գրավաճառացքով կվաճառուի ի գին 12 զուրուշ :

ՄԵՏՄԱՊԱՏԻ ՄՈՒՐԱՅԿԱՆԵՐԸ Այս մակագրով տետրեր կգըրուի Պարոնեան էֆէնտիէ, և Պարտիզպանեան տպարանէն ի ըյս ընծայուելով կվաճառուի ի գին 40 փարայ :

Պատկերազարդ Հռչակաւոր ռճիրք ՍԷՆ-ԺԵՐԱՆ ԿՈՄՍՈՒՀԻՆ Հեղինակ Աղեկասնդը Տիւմա

Թարգմանիչ Մ. Յ. Մէլիքեան Հրատարակիչ Ս. Ղ. Պարտիզպան Սոյն հետաքրքրական պատմութիւնը կը ծախուի Ս. Ղուկասեանի գրատունը և ուրիշ գրավաճառացքով ի գին 6 զըշ :

Գալաֆեան գրավաճառանոց

Table with 2 columns: Item name and Price. Items include 'Ներն կղանուլին հետեւեալ խիտ աժան գրեանք', 'Գերեզման Վեոն վերջին թագ', 'Ժիլ Պլաս', 'Պոնէո միլիոնաւոր Ա. Բ. Գ.', 'Հռչակաւոր Պորճիայք', 'Տաղք Հէքիմեանի', 'Պուրեանի', 'Ընթերցասիրութիւն Զօրայեան', 'Խաղաղի քնարձիլը', 'Հասունեան քաղաքականութիւն', 'Խորհրդածութիւն Բաթալայ', 'Նորընտիր հաւաքածոյ', 'Որթածաղիկ', 'Աղիւր կամ Ամերիկացիք', 'Ճիւղիլթն Ս. հատոր', 'Էքօնօմի Բօլիթիք', 'Յաջորդութ. պատրիարքն Եւմէ', 'Ս. Պօղոսի եկեղ. զանդակահարը', 'Թէլէկրաֆ Բէսալէսի պատկրղը', 'Ելէքարական հեռագիր', 'Բամելա կմ բարեկետ. զիշերներ', 'Տիւրպիսի Աչդ', 'Յօթ և Մարկիտ', 'Յովսէփ գեղեցիկ', 'Համ. նկար. պապական դրութ.', 'Բագամ ճէտովերի', 'Տիւրքերական ժողով', 'Եւմէք թէրթիպի', 'Սուտ լուսաւորչականք', 'Բարի իրիւն Պարոն Բանթալան', 'Սահմանադրական ճշմարտութ.', 'Նուէր հոգեւոր', 'Գուշակութիւնք օգոց', 'Պետիկին գրքոյիլը', 'Ժողովրդական մատենագրան', 'Մարիամ Ռօղա', 'Գափուր կոմս', 'Հրահանգ շերամատած.', 'Բարի Ֆրիտօլէրը', 'Հրահանգիլ վէպեր', 'Բարեպաշտ Մարիամ', 'Խոճկորակք', 'Պատմ. Հայոց և Աշխարհագր.', 'Աղգային հանդանակութիւն', 'Հարստութ. ճանքան Ֆուսիլինի', 'Բարոյական սկզբունք', 'Գաղտնիք կանանց', '» կղերականութեան', 'Ծխախոտին և ընչաղեղին աղղեցութիւնը', 'Գասալըն իփինէ պաղլամըլ', 'Խալիպար խանի պօրալին վիճակ', 'Թարիսի միւթէսար', 'Արայ գեղեցիկ', 'Գեղազրութիւն'

Նորայրի Գաղղարէն-հայերէն բառարանին 28դ թերթն ևս հրատարակեցաւ : Գլխաւոր վաճառատեղին է Ֆրէնկեան գրատունը, Ուզուն չարըլ թիւ 362. կղանուի նաեւ ամեն Հայ գրավաճառացքով, Արշակ էֆէնտիի թղթավաճառանոցն ի Ղալաթիա, և Վայսի քով ի մեծ փողոցն Բերայի : Իւրաքանչիւր թերթի գինն է 60 փըյ արծաթ :

PILULES HOLLOWAY

Լեարգի, ստամոքսի և աղիքների ամեն տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր է սոյն դեղահատը. ամեն ջղային տկարութեան ու ժաթափութեան և տխրութեան համար կը ջնջ և անհետ կընէ ամեն տեսակ անհաստատութեանց հետքերը : Սրտի և երիկամանց վրայ օգտակար ազդեցութիւն մ'ունի, արիւնը մաքրելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնաւորէ, և գրգռելով կենսական գործարանը կը զօրացնէ : Իւր դեղական մեծ ազդեցութեամբ սրտախառնութիւն, կուծութիւն, մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ լեցուած կազեր, գլխի ցաւեր կը վանէ, մարտնչութիւնը կը չափաւորի, և մարմնը մաքրուելով բոլոր այն աղտոտութիւններէ որ շատ անգամ զանազան հիւանդութեանց սկզբնապատճառ կըլլան, առողջ, ուժեղ և բնական զերբ կը զգենու :

ONGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՒՂՈՌԻԿԻ Մորթային հիւանդութիւնք և վէրք բուժելու մասին ունեցած պալաւական յատկութեանցը հաւասարի բընաւ ուրիշ դեղ մը. հին կամ նոր թունաւոր վէրքեր, ուռեցք, քաղցկեղ (շէնիէնիէ), սրունից և ստեանց վէրքեր կամ բոլորովին կանցնին և կամ կը լաւանան. օգտակար է նաև հարբուսի, հազի, սրտի բարախման, մանաւանդ օղացաւ (էլ) ըսուած հիւանդութեան իւր կազուրիչ, և զօրաւոր ազդեցութեամբ խոյլ (շուրաճ) հիւանդութեան ապականիչ զօրութիւնը ինչ աստիճան որ ըլլայ կը դիմազրուէ :

ԴՐԱՄԱԿԱՆ

Table with 2 columns: Item name and Price. Items include 'Քօնօլիտէ', 'Երկաթուղեաց', 'Թրամուէյ', '1863 ի փոխառութիւն', '1865 ի', '1869 ի', '1872 ի', 'Օսմանեան լիւրան 100 զըշէն', 'Մէճիտիլէ', 'Մէթալիք', 'Հինգնոց', 'Վեցնոց', 'Պղինճ', 'Թղթադրամ', 'Բուսիոյ Բօլ', 'Գաղղիական լիւրա', 'Անգղիական', 'Գրիմից'

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՐԳԱՐԵԱՆ Կ. Պօլիս, Սուրբան Համալ